

ՆՈՐ ԶՈՒՂԱ



ՏԵՂԵԿԱՏՈՒ ՄՊԱՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԺԳ. ՏԱՐԻ, ԹԻԻ 107, ՄԱՐՏ-ԱՊՐԻԼ, 2015



Հայաստան»:

Այս պատգամով ու այս տեսիլքով վերապրեցինք ու պահանջատիրական մեր պայքարը շարունակեցինք մեր ազգի սեփական ու արդար իրաւունքը ստանալու՝ մեր կորցրած հող-հայրենին վերադարձնելու, վերագտնելու կորուսեալ դրախտը: Միշտ հաւատացինք, որ չենք կարող ապրել առանց հողի, չենք կարող բարգաւաճել, չենք կարող առողջ շնչել ու առաջադիմել, առանց սեփական մեր հողերի:

Այո՛, մեր ժողովուրդն իրաւունքն ունի ապրելու իր սեփական ու պապենական հողերի վրայ, որովհետեւ հայոց հողերը պատկանում են միայն հայերին՝ իրենց իսկական տէրերին:

Այս պատգամը անելի հզօրացաւ, եւ այսօր 100-րդ տարեկիցին, այն մեր յաւերժ գոյատեւման հաւատամքը պիտի դառնայ, մեծատաղանդ հայ գրողի՝ Մուշեղ Գալշոյեանի բառերով բարձրադաշակ ասելու աշխարհին եւ մանաւանդ արիւնարբու թշնամուն՝ թուրքին. «Երկրի ու հողի կորուստը ծանր կորուստ է, բայց հողն անմահ է, հողն ուրիշ տէր չի ընդունի: Հողն իր տիրոջ արիւնակիցն է ու իր արիւնակիցին է սպասում, սպասում է, ու օրերից մի օր կը հանդիպեն: Հողի կորուստը անդարձ կորուստ չէ: Հողն անմահ է»:

Այսօր 100 տարի անց, որտե՞ղ ենք գտնուում, ինչպե՞ս ենք ապրում մեր կեանքը, ինչպիսի՞ ոգով ենք առաջնորդուում եւ ինչպիսի՞ գիտակցութեամբ ենք պահանջում ու պայքարում: Ծի՛շտ է, այսօր գաղթական ու արքայական չենք եւ անելի բարօր կեանք ենք ապրում: Միթէ սա բաւարար է մեզ: Արդեօք սա մեզ անտարբերութեան չի՞ մղում, չի՞ աղօտանում մեր գոյութեան նպատակի գիտակցական լոյսը, չի՞ պակասեցնում մեր մէջ յոյսն ու հաւատը առ անկորնչելին. թէ՛ մենք ազգովի եւ պարտադրաբար հեռացանք ու տեղահանեցինք մեր հողերից, կորցրինք ամէն ինչ, հոգի, մշակոյթ, հող, երկիր... ու մի խօսքով՝ պատմական ու յաւերժական հայրենիք:

Մենք պէտք է ճանաչենք մեր պատմութիւնը, յիշենք մեր սուրբ նահատակներին, հաւատարիմ մնանք նրանց թողած կտակին եւ աշխարհին յիշեցնենք, որ կայ մի ժողովուրդ, որ արդարութիւն է պահանջում եւ ո՛չ թէ՛ ողորմութիւն:

Այս առիթով գնահատում ենք 100 տարւայ ընթացքում կատարւած բոլոր աշխատանքները՝ կապւած Հայ Դատի ճանաչման եւ մեր արդար իրաւունքների վերատիրացման:

Խոր երախտագիտութիւն վերապրած սերունդին, որոնք մեզ ապրեցրեցին:

Խոր երախտագիտութիւն բոլոր այն պետութիւններին, որոնք ճանաչեցին Հայոց Յեղասպանութիւնը եւ Թուրքիային կոչ ուղղեցին՝ ճանաչելու եւ հատուցելու հայ ժողովրդին:

Այո՛, 100-րդ տարեկիցն է Հայոց Յեղասպանութեան...:

Արթնացի՛ր, ո՛վ հայ ժողովուրդ, զգօ՛ն եղի՛ր ո՛վ երիտասարդութիւն հայոց՝ քաջ ու գիտակից լինելու, որ կանելի չէ ապրել առանց հողի:

Եւ ի՞նչ է մեր նպատակը 100 տարի անց... Հասնել մեր հողերին. սա՛ է մեր հիմնական ու վերջնական նպատակը, սա՛ է մեր պահանջը, մեր արդար իրաւունքը... «Մեր հողերը, մեր հողերը», մեր պատմական ու յաւերժական հայրենիքը:

Այո՛, լսե՛նք Աստուծոյ խոստումը այս անգամ հայ ժողովրդին ուղղւած. «Պիտի հանեմ ձեզ ձեր գերեզմաններից, կենդանութեան շունչ պիտի տամ ձեզ եւ ձեզ ձեր երկիրը պիտի վերադարձնեմ»: Ահա՛ պատգամը աստուածային, ահա՛ խոստումը աստուածապարգեւ, որ մեզ յուսադրելու է, ոգետրելու է՝ առանել կեանքին նայելու, հողի ձայնին ունկնդիր լինելու, մեր սրբութիւններին եւ արժէքներին կառչած մնալու եւ նրանց տէրն ու պահապանը դառնալու:

Արիւնարբու մեծ ոճրագործը՝ Թալէաթը մի առիթով ասել է. «Հայերը պիտի մոռացեն... Հողը պիտի մոռանայ նրանց»: Նա սխալւել է, որովհետեւ հողը իր իսկական տիրոջը հաւատարիմ է եւ միշտ նրան է սպասում, մինչեւ նրան միանայ:

Հետեւաբար, Հայոց Յեղասպանութեան 100-րդ տարեկիցը, այսօրը՝ Ապրիլ 24-ը մեզ մի պատգամ է տալիս՝ Յիշել եւ Պահանջել՝ «Մեր հողերը, մեր հողերը»: Այս պիտի լինի մեր ազգի անդառնալի նպատակը, մեր ազգի յաւերժութեան հաւատամքը:

«Եթէ մոռանամ քեզ՝ Հայաստան, թող ողջ աշխարհը նախատի ինձ»:

Ազգովի նայենք կեանքին,

Ազգովի կառչենք կեանքին՝ դառնալու անմահութեան ճամբորդ մեր սեփական հողի վրայ:

Փա՛նք մեր սուրբ նահատակներին:

Յաւերժ փա՛նք անմահ հայ ժողովրդին:

Յաւերժ փա՛նք՝ Ազատ, Անկախ, Ամբողջական Հայաստանին:

՝ ² ˆ ¶ ¼ Ÿ ² ð օ ä Æ Ī ä ä ä è
² è ² æ Ū ä ð , è ä ² Ծ ² Ū Ē Ծ ² Ū ä ð Æ օ Ծ Ē

24 ապրիլի, 2015



Յեղասպանությունը ժխտող քաղաքականությանը՝ ասաց. «Հայ ժողովուրդը առաջադէմ մարդկութեանը դիմելով, կոչ է անում նրանց՝ Յեղասպանութեան 100-ամեայ տարելիցը առիթ համարելով միատեղել ջանքերը ոչ միայն Հայոց ցեղասպանութեան ճանաչման ու դատապարտման, այլև դրա հետեւանքների վերացման ուղղութեամբ: Իսկ Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցին նւիրած այս միջոցառումները առիթ են ընձեռում մեզ համախմբելու, միասնականութիւն դրսեւորելու եւ հաւաքական ուժերով շարունակելու մեր պայքարը պատմական իրողութիւնն ու արդարութիւնը վերականգնելու համար: 100-ամեակը մեզ համար նոր սկիզբ է՝ հատուցման հանգրւան թեւակոխելու համար»:



Ելույթների շարանում իր խօսքն ունեցաւ նաեւ Իրանի Իսլամական խորհրդարանում հարաւային իրանահայութեան պատգամատուր Ռոբերտ Բեգլարեանը, ով իր խօսքում համառօտ ակնարկ ունենալով անցնող 100 տարիներին կրած տառապանքների կողքին հայ ժողովրդի արձանագրած անկիւնադարձային յաջողութիւններին՝ ինչպիսին են Հայաստանի Առաջին Հանրապետութիւնը, Սփիւռքի զարգացումը, Հայաստանի վերանկախացումը եւ Արցախեան յաղթանակը, ասաց. «Ապագան կերտւում է բոլորիս կամբով: Ճիշտ է այն հեշտ չի կերտւում, սակայն մենք պէտք է 100-ամեակն առիթ դարձնելով մեր դրոշմը թողնենք ապագայի վրայ, որպէսզի այն հետագայում դառնայ մեր ազգի

կողմից արձանագրւած պանծալի պատմութիւն»: Նա իր խօսքի շարունակութեան մէջ նշելով, որ Թուրքիան այսօր փորձում է տնտեսական, քաղաքական, մշակութային եւ գաղափարախօսական առումներով իրենից մի այլ պատկեր ներկայացնի աշխարհին, աւելացրեց, որ քանի դեռ իւրաքանչիւր հայ համոզւած լինի արդարութեան վերականգնմանը, դա մեզ կը մղի դէպի նորանոր յաջողութիւններ:



Համահաւաքի շարունակութեան մէջ վանքի շրջափակում ամենամեայ բողոքի նստացոյցը կազմակերպող «Թաղէոս Թաղէոսեան» պատանեկան միութեան վարչութեան անունից հանդէս եկաւ Անիա Անդրիասեանը, որն իր խօսքում 2015 թականը հայ ժողովրդի համար անկիւնադարձային տարի համարելով եւ դատապարտելով թրքական իշխանութեան կողմից մինչեւ այսօր իրականացող հակահայ քաղաքականութիւնը, ասաց. «Մենք «Թաղէոս Թաղէոսեան» պատանեկան միութեան անդամներս, Հայոց ցեղասպանութեան ոգեկոչման ծրագրերի շրջագծում նստացոյց եւ այլ աշխատանքներ նախաձեռնելով, ոչ միայն մեր յարգանքի տուրքն ենք մատուցում 1.5 միլիոն անմեղ գոհերի անմոռաց եւ անթառամ յիշատակին, այլև մեր պահանջատիրութեան ձայնն ենք միացնում աշխարհասփիւռ հայ պատանիների արդար ձայնին՝ խոստանալով, որ չենք նահանջելու մեր պայքարից մինչեւ Հայ Դատը չզտնի իր արդար լուծումը: Մենք առաւել անկոտորում կամքով լծւելու ենք մեր սրբազան պայքարին մինչեւ արդարութեան արեւը կը շողայ հայրենքի վրայ»:

Իսկ որպէս երեկոյի եզրափակիչ ելույթ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանի պատգամն ընթերցեց հոգշ. Տ. Արտակ արք. Արարեանը:

Ահա մի հատւածի մէջբերում սոյն պատգամից.
 «Այո՛, լսենք Աստուծո խոստումը այս անգամ հայ ժողովրդին ուղղւած՝ պիտի հանեմ ձեզ ձեր գերեզմաններից, կենդանութեան շունչ պիտի տամ ձեզ եւ ձեզ ձեր երկիրը պիտի վերադարձնեմ: Ահա՛ պատգամը աստուածային, ահա՛ խոստումը աստուածապարգեւ, որ մեզ յուսադրելու է, ոգեւորելու է՝ առաւել կեանքին նայելու, հողի ձայնին ունկնդիր լինելու, մեր սրբութիւններին եւ արժէքներին կառչած մնալու եւ նրանց տէրն ու պահապանը դառնալու: Արիւնարբու

Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի Կենտրոնական յանձնախումբն ու պահանջատեր հայորդիներ:

Ապա ժամը 11:30-ին, Ժողովրդի խուններամ մասնակցութեամբ սկիզբ առաւ բողոքի քայլարշաւը: Եր-

կու ժամ տեսողութեամբ քայլարշաւը ներկաների ուժգին վանկարկումների ներքոյ ընթացաւ Հաքիմ Նեգամի, Բուրաւո Մելլաթ, Թոհիրդ եւ Արեւելեան Նազար գլխատար պողոտաներով:



«Մեր Ժողովուրդն այսօր, Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին, պատմական պարտաւորութիւն ունի ապացուցելու, որ իր դաւանած «Մէկ նպատակ, մէկ ամբողջութիւն» սկզբունքով՝ չկայ փրկութեան մի այլ ուղի, բացի սեփական եւր հաւաքական կամքին եւ կազմակերպ ուժին ծառայեցնելու: Այս խոր իմաստով, անցնող 100 տարիներում, իւրաքանչիւր Ապրիլ 24-ին, սերունդները ամենայն հաւատարմութեամբ ուխտեցին գինւորագրւել Հայ Դատի ծառայութեան դրօշին: Շատերը «Իմացեալ մահ»-ն ընդունեցին, յանուն հայութեան անմեռ իղէալին: Պէտք է աւելի կազմակերպւել եւ աւելի զօրանալ: Վճռակամութեան մէջ է մեր յաղթանակը»:



Յաջորդի, գեղարւեստական-վաւերագրական ծրագիր բեմականացւեց՝ «100-րդ ակնթարթ. Յիշողութիւն վերքի, խոյանք վերելքի» խորագրով, որը հաստատրիմ մնալով յանձնախմբի կողմից ճշտած սկզբունքներին, յաջողւել էր ի մի բերել Նոր Զուղայի բոլոր միութիւնների մշակութային խմբերին, Նոր Զուղայի եւ Շահինշահրի երգչախմբերին եւ 100-ամեակի միջոցառման համար իրենց պատրաստակամութիւնը յայտնած բազմաթիւ երիտասարդների ու դպրոցական աշակերտ-ուրիշների, ինչը համապատասխանում էր Հայոց ցեղասպանութեան 100-ամեակը նշելու համազգային ըմբռնումին ու տարողութեանը: Ծրագրի իրականացման գործում իրենց ջերմ պատրաստակամութեամբ եւ յանձնա-

նութեամբ մասնակից էին շուրջ 130 անհատներ: Անգուգական այս ներկայացումը երգերի, պարերի, տեսաֆիլմի, խօսքի եւ իրական փաստերի ու յուշագրութիւնների մի համադրութիւն էր, ամփոփած հետեւեալ հինգ դրագներում: Առաջին՝ «Խոնարհում Մեծ Եղեռնի սրբազան նահատակների յիշատակին»:



Երկրորդ դրագում ներկայացւած էր՝ Նեմեսիս, վրէժի ու արդարութեան առաջին պոթկումները՝ 20-րդ դարի առաջին ցեղասպանութեան յանցագործների դէմ.



Երրորդ դրագը՝ «Հայ Ժողովրդի արեան մելանով» գրած օրէնքը՝ Միացեալ ազգերի կազմակերպութեան «Ցեղասպանութիւնները կանխարգելելու եւ պատժելու» մասին օրէնքի ակունքները եւ դրա առնչութիւնը Հայոց ցեղասպանութեան իրողութեան հետ:



Դրագ չորրորդ՝ Եւ կորուսն էր անչափելի... Միլիոնատր կեանքեր, չքնաղ էրգիր, մշակոյթի բնօրրան, հայ մարդու տեսակ: Ակըն-



գապետին, որ անցնող տարւայ ընթացքում ընդառաջելով զանազան առիթներով Ազգային առաջնորդարանի կողմից իրեն յղած հրաւերներին, իր ներկայութեամբ պատուել է բոլորին:

Թեմակալ առաջնորդն անդրադառնալով Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին, մատնանշեց այս տարւայ յատուկ նշանակութիւնն ու կարեւորութիւնը հայ ժողովրդի համար, միաժամանակ խօսելով այս կապակցութեամբ Հայաստանի հանրապետութեան կենտրոնական յանձնախմբի ծրագրած աշխատանքների մասին, Սպահանի հայոց թեմի համար մեծ պատիւ համարեց Երեւանում կայանալիք յիշատակի միջոցառումներին դկտր. Զառգաւփուոի ներկայութիւնը, յայտնելով, որ սկզբունքային համաձայնութիւն տալու դէպքում, Առաջնորդարանը կատարելու է պարտն ու պատշաճը՝ Հ.Հ.-ի նախագահի կողմից նրա համար պաշտօնական հրաւեր ապահովելու ուղղութեամբ:

Սպահանի նահանգապետ դկտր. Ռասուլ Զառգաւփուոն իր ուրախութիւնը յայտնելով այցելութեան կապակցութեամբ, ինքը եւս շնորհատրանքներ փոխանցեց Նոռուզի, ինչպէս նաեւ առաջ-

նորդ Սրբազան Հօր «Արքութեան» տիտղոսի ստացման առիթներով: Պրն. նահանգապետն անցնող տարւայ մեծ ձեռքբերումներից համարեց Ս. Ամենափրկչեան վանքի «Ս. Յովսէփ Արեմաթացի» եկեղեցու 350-ամեակի պատշաճ տօնակատարութիւնը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետի հովակալան եւ Հայաստանի հանրապետութեան վարչապետի աշխատանքային այցը Սպահան: Յիշեալն իր խօսքերի մէջ յատուկ կերպով շեշտեց, որ աշխարհը պէտք է իմանայ, որ ընդհանրապէս Իրանում եւ ի մասնաւորի Սպահանում միաստանաձեւ կրօնների հետեւորդները խաղաղ համագոյակցութեամբ եւ միասնական ջանքերով ստեղծել են օրինակելի մի միջավայր, որը յատկապէս գարնանային այս օրերին, առաւել հաճելի է դարձել այցելուների եւ զբօսաշրջիկների համար:



Բարեմաղթանքներ փոխանցելուց եւ հիւրասիրելուց յետոյ պատիրակութիւնը հրաժեշտ տուց նահանգապետին:

ԲԱՂԱԲԱՎԱՐԱԿԱՆ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՍՊԵՃԱՆ ԲԱՂԱԲԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՂԱԲԱՊԵՏԻ ՀԵՏ

Երկուշաբթի՝ 2015 թւականի մարտի 30-ին, իրանական Նոր տարւայ՝ «Նոռուզ»-ի առթիւ, Ազգային առաջնորդարանի պատիրակութիւնը գլխաւորութեամբ Սպահանի հայոց թեմի թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բարբէն արք. Չարեանի այցելեց Սպահան

քաղաքի ընդհանուր քաղաքապետ դկտ. Սաղայեան-Նեժադին: Պատիրակութեանը մաս էին կազմում Իրանի իսլ. խորհրդարանում հարաւային իրանահայութեան պատգամատորը, Սպահանի հայոց թեմի Պատգամատրական ժողովի, Թեմական եւ Կրօնական խոր-

հուրդների, Հաշվեքննիչ մարմնի ատենապետերն ու ներկայացուցիչները: Սույն հանդիպմանը ներկայ էր նաև Սպահանի 5-րդ շրջանի քաղաքապետ ճարտ. Ասառզադեգանը:



Գերշ. Սրբազան Հայրը ուրախությամբ յայտնելով ստեղծված առիթի համար, իր, ազգային մարմինների և Թեմի հայության անունից քաղաքապետին շնորհալորեց Նոռուզը և բարեմաղթանքներ փոխանցեց նրան և երկրի պետական կառույցների բոլոր պատասխանատուներին ու աշխատակիցներին:



Փոխադարձաբար, ընդհանուր քաղաքապետ դկտր. Սաղաթեան-Նեժդարը առաջնորդ Սրբազան Հօրը և պատվիրակության անդամներին իր ողջունը փո-

խանցեց և գարնանային զարթօնքը բարեբաստիկ առիթ համարեց համայն մարդկության համար, շեշտելով, որ Աստուած բնութեան օրէնքների միջոցով իսկ ուսուցանում է մարդուն՝ աշնանային տերեւաթափի նման իր վրայից թօթափելու մեղքն ու սխալը, ձմեռային ցրտաշունչ եղանակի պէս անցնել դժարութիւնները յաղթահարող ուղով և գարնանային վերարթնացնող եղանակի նման՝ հասնելու գեղեցիկ արդիւնքի և վերանորոգ կեանքի:

Յարգելի քաղաքապետն անդրադառնալով տարածաշրջանում տիրող ծանր և պատերազմական կացութեանը, գոհունակութիւն յայտնեց Աստծուն, որ Իրանը մնում է անդորր և կայուն վիճակում:

Հանդիպման ընթացքում, գերշ. Տ. Բարգէն արք. Չարեանն անդրադառնալով Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին և մատնանշելով Սպահան-Երեւան քոյր քաղաքների կապերի առաւել ամրապնդմանը, Դկտր. Սաղաթեան-Նեժդարին իրազեկեց Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի առթիւ Հայաստանի հանրապետութեան կենտրոնական յանձնախմբի կողմից նախատեսված միջոցառումների վերաբերեալ և յայտնեց, որ միջոցառումներին մասնակցելու քաղաքապետի սկզբունքային համաձայնութեան դէպքում, Ազգային առաջնորդարանը տնօրինելու է պատշաճը նրա համար պաշտօնական հրաւեր ապահովելու ուղղութեամբ, ինչը մեծ պատիւ և հպարտառիթ երեւոյթ է լինելու Սպահանի հայոց թեմի համար:

Թեմակալ առաջնորդն առիթը պատեմ համարեց նաև շնորհակալութիւն յայտնելու Սպահանի ընդհանուր և 5-րդ շրջանի քաղաքապետերին ազգային իշխանութեան հետ փոխադարձ համագործակցութեան, ինչպէս նաև Սպահան քաղաքը ծաղկեալ և գեղեցիկ պահելու ուղղութեամբ նրանց տարած ջանքերի առթիւ:



ՄՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՄՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽԱՄԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԵՆԹԱՅԱՆՃՆԱԽԱՄԵՐԻ ՀԵՏ

Չորեքշաբթի՝ 2015 թվականի ապրիլի 1-ին, Ս. Ամենափրկչեան վանքի Ծաղկեայ դահլիճում, տեղի ունեցաւ Սպահանի հայոց թեմի Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի Կենտրոնական յանձնախմբի հերթական հանդիպումը ենթալանձնախմբերի անդամների հետ:



Հանդիպումն սկսեց թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանի աղօթքով, որին յաջորդեց Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի Կենտրոնական յանձնախմբի նախագահ պրն. Նոէլ Մինասեանի ողջոյնի եւ շնորհակալական խօսքն ուղղւած ներկաներին հանդիպմանը մասնակցելու համար:

Այնուհետեւ հերթաբար զեկուցեցին Իրանի իսլամական խորհրդարանի, Ս.Ա. Վանքի Հայոց ցեղասպանութեան յուշարձանի յարակից տարածքի բարեկարգման, Սոցիալական ցանցերի, Հրատարակչական, Ս.Ա. Վանքի տարածքի բարեգարդման, Ս.Ա. Վանքի թանգարանի Հայոց ցեղասպանութեան տաղաւարի, Համալսարանական շրջանակում աշխատանք իրականացնող եւ Մշակութային միջոցառումների ենթալանձնախմբերի համակարգողները՝ կատարւած եւ ընթացքի մէջ գտնող աշխատանքների վերաբերեալ, որոնց մասին եղան հարցումներ եւ առաջարկներ:




Շարունակութեան մէջ արտայայտեց պրն. Նոէլ Մինասեանը: Նա յանձնախմբի անունից իր գոհունակութիւնը յայտնելով կատարւած եւ ընթացքի մէջ գտնող մեծածաւալ աշխատանքների կապակցութեամբ աւելացրեց, որ Սպահանի նահանգային բարձրաստիճան

պատասխանատու այրերի հետ տարբեր առիթներով ունեցած հանդիպումների ընթացքում արժարժեւել է Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի հարցը, միաժամանակ մի շարք բարձրաստիճան պաշտօնեաներին տեղեկացնելով Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցին նկիրւած միջոցառումները համակարգող պետական յանձնաժողովի ծրագրած աշխատանքների մասին, փոխանցել է, թէ Երեւանում կայանալիք յիշատակի միջոցառումներին մասնակցելու նրանց սկզբունքային համաձայնութիւնը ստանալու դէպքում, Առաջնորդարանը կատարելու է պարտն ու պատշաճը՝ Հայաստանի հանրապետութեան նախագահի կողմից պաշտօնական հրաւեր պահովելու ուղղութեամբ:

Պրն. Նոէլ Մինասեանն իր խօսքերի շարունակութեան մէջ ընդգծեց, որ այս տարի իրանական Նոր տարւայ՝ Նոռուզի արձակուրդները լաւագոյնս օգտագործեցին Հայոց ցեղասպանութեան իրողութիւնը Ս. Ամենափրկչեան վանք այցելողներին ներկայացնելու համար, որի վառ ապացոյցն է այս նպատակով կազմակերպւած ցուցահանդէսի նկատմամբ ցուցաբերւած հետաքրքրութիւնը եւ յուշամատենում պարսիկ հայրենակիցների գրառած կարեկցանքի եւ Թուրքիոյ իշխանութեանը դատապարտող տեսակէտները, Հայոց ցեղասպանութեան թեմայով տպագրւած հազարաւոր բրիւզուրների սպառումը եւ վերջապէս Ռուբէն երիտ. միութեան կազմակերպած գրքի վաճառքի կրպակում Ցեղասպանութեան վերաբերող մեծ քանակութեամբ գրքերի վաճառքը: Պրն. Նոէլ Մինասեանն իր արտայայտութիւնների աւարտին ուժ ու կորով մաղթեց բոլոր ենթալանձնախմբերին եւ յոյս յայտնեց, որ յաջողութեամբ են աւարտելու նախատեսւած բոլոր միջոցառումները:

Հանդիպումն աւարտեց Թեմակալ առաջնորդի արտայայտութիւններով: Նա ներկաներին յորդորեց միասնաբար եւ ամուր կամքով լծել արդիւնաւէտ աշխատանքի եւ հայ ժողովրդի պահանջատիրութեան ծայրը լսելի դարձնել Իրանի հասարակութեանն ու համայն աշխարհին եւ այսպիսով վառ պահել մեր նահատակների յիշատակը:

Հայրը ողջունելով հիւրերին՝ իր ուրախութիւնը յայտնեց Ռուսիոյ բարձրաստիճան ալերի այցելութեան առիթով եւ գնահատեց ու շեշտեց, որ Իրան-Ռուսաստան-Հայաստան յարաբերութիւններն ու բարի-դրացիական կապերը մեծապէս օժանդակում են տարածաշրջանի կայունութեանն ու խնդիրների խաղաղ կարգաւորմանը:



Թեմակալ առաջնորդն անդրադառնալով Հ.Հ.-ի Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի պետական յանձնաժողովի ծրագրերի մասին, յատուկ շնորհակալական խօսք ուղղեց Ռուսաստանի դաշնութեանը եւ յատկապէս Ռուսիոյ նախագահին՝ Ապրիլի 24-ին Հայաստանում ներկայ գտնելու, ոգեկոչման արարողութիւններին մասնակցելու եւ Ցեղասպանութիւնը դատապարտող ելոյթով հանդէս գալու համար: Նա շեշտեց, որ Ռուսաստանն իբրեւ գերութիւն իր կարելորդ դերակատարութիւնը կարող է ունենալ արդարութեան հաստատման մէջ: Առաջնորդ Սրբազան Հայրը նաեւ համապարփակ բացատրութիւն ներկայացրեց Սպահանի հայոց թեմի կառոյցի եւ ազգային դրամաձի մասին:

Ռուսաստանի Արտաքին գործոց նախարարութեան տեղակալ Իգոր Մորգուլովն իր հիացմունքը յայտնելով եկեղեցու եւ թանգարանի մասին, ընդգծեց, որ Ռուսաստանի դաշնութիւնը միշտ ձգտել է խաղաղութեան եւ արդարութեան հաստատմանը, նաեւ Հայաստանի եւ Իրանի հետ կապերի ամրապնդմանը՝ երկկողմ շահերի նկատառումով: Ըստ փոխ-նախարարի, Ռուսաստանի համար կարելորդ նշանակութիւն ունի Հայաստանի եւ Իրանի հետ յարաբերութիւնները: Նա նշեց, որ Ռուսաստանի իշխանութիւնները յատուկ ուշադրութիւն են տածում իրենց երկրի հայ քաղաքացիների եւ Հայաստանի Հանրապետութեան նկատմամբ, որպէս օրինակ յիշատակելով Ռուսաստանի նախագահի ներկայութիւնը Հայոց ցեղասպանութեան 100-

ամեակի առթիւ կազմակերպած ծրագրերին:



Իգոր Մորգուլովն իր արտայայտութիւնների շարունակութեան մէջ տեղեկացրեց, որ Ռուսաստանի կառավարութիւնը Իրանի հետ կապերի եւ յարաբերութեան զարգացման նոր ծրագիր է մշակում, որին կարող է աջակցել եւ նպաստել Իրանում ապրող հայութիւնը:



Թեմակալ խորհրդի ատենապետ Պրն. Նոէլ Մինասեանը յիշեցնելով Իրանում հայ համայնքի բազմակողմանի վաստակի եւ դերակատարութեան մասին, թէ անցեալում՝ արհեստի, արուեստի, տնտեսական եւ քաղաքական բնագաւառներում եւ թէ ներկայիս՝ երկրի ամբողջական շահերի պաշտպանութեան գործում, շեշտեց, որ հայ համայնքն ու ղեկավարութիւնը ինչպէս միշտ նպաստելու են տարածաշրջանում խաղաղ կարգավիճակի հաստատման եւ երկրների միջեւ բարի յարաբերութիւնների զարգացման ուղղութեամբ:

Աւելի քան մէկ եւ կէս ժամ տեսած հանդիպումն աւարտեց բարեմաղթանքներով եւ յաճախակի այցելութիւնների ակնկալիքով:

«ԱՐՓԱ» ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԽՄԲԻ ՀԱՄԵՐԳԸ ՆՈՒՐԻԱԾ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻՆ

Նախաձեռնությամբ Թեմիս Հայոց ցեղասպանության 100-ամեակի Կենտրոնական յանձնախմբի Մշակութային միջոցառումների ենթալանձնախմբի, թուականիս մարտի 5-ին եւ 6-ին, Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միության դահլիճում, տեղի ունեցաւ «Արփա» նազախմբի ելոյթը՝ դկտր. Արքի Բաբումեանի ղեկավարությամբ:



Հայոց ցեղասպանության 100-ամեակին նիրաձ այս համերգին ներկայ էին Սպահանի 5-րդ շրջանի քաղաքապետ՝ ճրտ. Ասաոզադեզանը, Սպահանի արւեստի համալսարանի տնօրէն՝ դկտր. Թահեռին, Սպահանի պետական համալսարանի պատասխանատուներ, քաղաքական, կրթական, հասարակական եւ մշակութային այլ գործիչներ, ազգային մարմինների ներկայացուցիչներ եւ մեծ թուձ հայ ու պարսիկ հայրե-նակիցներ:



Ծրագրի առաջին բաժնում ողջոյնի եւ բարիգալւստեան խօսքով հանդէս եկաւ օրայ հանդիսավար՝ Ռուբէն Խաչիկ Գրիգորեանը, ուձ անդրադառնալով Հայոց ցեղասպանության 100-ամեայ տարելիցին, կարեւորությամբ ընդգձեց, թէ մէկ դար անցնելով այդ ահուելի ողբերգութիւնից, այն չի անհետացել համայն մարդկութեան յիշողութիւնից: Նա ցաւով մատնանշեց այն իրողութիւնը, որ Թուրքիայի իրարայաջորդ պետութիւնները շարունակում են իրենց ժխտողական քաղաքականութիւնը, ինչպէս նաեւ կատարաձ յանցագործութիւնն ու դրա հետեանքները լոութեան մատնելու փորձերը:

Ծրագրի շարունակության մէջ պարսիկ հաղորդավարուհու միջոցով մեկնաքանեց Հայոց ցեղասպանու-

թեան 100-ամեակի խորհրդանիշ՝ «Անմոռուկ» ծաղկի եւ «Յիշում եմ եւ պահանջում» կարգախօսի իմաստը: Այնուհետեւ հանդիսատեսով լեցուն դահլիճում, հայ եւ պարսիկ երաժիշտների ու մեներգիչների կատարմամբ հինշեցին անաւնի կոմպոզիտորներ ու երաժիշտներ՝ Կոմիտասի, Արա Գէորգեանի, Մոցարտի, Մեսչեանի, Ալբինոնի, Փան Բլոդ Փեթի, Եսայու եւ Հայկեր Սոլի ստեղձագործութիւնները: «Արփա» նազախումբը անցեալի անաւնի կոմպոզիտորների գործերի կատարումով, վերաիմաստաւորեց հայ ժողովրդի վերաձննդի գաղափարը: Յատկանշելի է, որ պարսիկ երգիչների հայերէն երգերի բարձրակարգ կատարումը հիացմունքի պատձաւ դարձաւ հայ հանդիսատեսի մօտ:



Երաժշտութիւնների կատարմանը զուգահեռ հանդիսատեսին ներկայացեց Հայոց ցեղասպանության եւ հայ ժողովրդի պահանջատիրութեան պատմութիւնը, ինչպէս նաեւ դրազներ Կոմիտասի կեանքից ու գործունէութիւնից: Համերգի ընթացքում ցրեց պարսկերէնի թարգմանաձ Հանրի Վերնոյի «Մայրիկ» ֆիլմից հատաձներ, որը խոր ազդեցութիւն թողեց ներկաների վրայ:



Այսպիսով հնարաւոր դարձաւ արւեստի միջոցով պարսիկ հանդիսատեսին ցոյց տալ հայ ժողովրդի մէկ դար առաջ ապրաձ ցաւն ու տառապանքը եւ մեր պահանջի ձայնը լսելի դարձնել նրանց:

Վերջում օրայ հանդիսավարը գորձադիր յանձնախմբի անունից երախտագիտութեան խօսք ուղղեց բոլոր նրանց, ուձքեր իրենց բոլոր կարողութիւնը ի գործ դրին միջոցառումը լաազոյնս իրականացնելու համար:

Թահմազեանը, Սերլի Նազարեանը եւ Բրայան Փանոսեանը, իսկ անգլերէն խօսքը հնչեց Լիլիթ Գեորգեանի եւ Անի Սիմոնեանի միջոցով:

Ծրագիրը շարունակեց Վարանդի գրչին պատկանող «Եղեռնագործներին» ստեղծագործութեան ասմունքով աշակերտներ՝ Նոյեմի Ղարիբեանի, Փարելի Ղազարեանի, Արսիկէ Հայրապետեանի, Մհեր Մինասեանի եւ Մինելի Յակոբեանի կատարմամբ: Վերջում դպրոցի երգեցիկ խմբի միջոցով կատարուեցին «Զարթիր որդեակ» եւ «Երկիր հարազատ» երգերը:

Միջացառումը եզրափակեց հոգշ. Տ. Արտակ արք. Արաբեանի պատգամով, ով աշակերտների ներկայութիւնը կարեւորեց որպէս Հայոց ցեղասպանութիւնից 100 տարիներ անց հայ ազգի գոյատեւման եւ վերապրումի կարեւոր փաստ եւ դպրոցի պատասխանատուներին փոխանցեց Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանի գնահատանքի խօսքը: Ծրագրի ասարատին հնչեց միասնական աղօթք եւ տեղի ունեցաւ աշակերտական ծաղկեմատուց:

Երեքշաբթի ապրիլ 21

Կէսօրին ժամը 12:30-ին, Նոր Զուղայի հայոց ազգ. «Քանանեան» աղջկանց եւ «Կատարիներեան» տղայոց միջնակարգ դպրոցների ու Ծափինշահրի հայոց ազգ. «Սրբոց Վարդանանց» եւ «Մասիս» դպրոցների աշակերտութիւնը համախմբուեցին Ս.Ա. վանքում, որտեղ ուժգին վանկարկումներով, աշակերտական ելոյթներով ու ծաղիկների մատուցմամբ մի անգամ եւս ապացուցեցին, որ իրենք հայկական արդար Դատի անխոնջ պաշտպաններն են լինելու:



Բոլորը կրում էին 100-ամեակի կրծքանշանները, իսկ Ծափինշահրի աշակերտութիւնը հագել էր անմոռուկ ծաղկի պատկերով հագուստներ՝ իր հետ ունենալով պահանջատիրական խօսքերի ցուցանակներ: «Քանանեան» դպրոցի աղջիկները պատրաստել էին Յեղասպանութեան թեմային առնչող պատի թերթեր եւ պաստառներ, որոնց նույնպէս կրում էին իրենց հետ:

Միջոցառումը վարեց եւ օրայ բացման խօսքն ընթերցեց ուսուցչուհի Սօսէ Պօղոսեանը, ապա «Սրբոց Վարդանանց» դպրոցի կողմից աշակերտական խօսքն ընթերցեց Մելիկէ Մարգարեանը, ասմունքեցին՝ Մեզան Բարձեանը՝ «Պատգամ» եւ Վանայ Յակոբ Չաքերեանը «Ամենայն սրտով» բանաստեղծու-

թիւները: Ելոյթն ասարտեց «Կուեցէք տղերք» երգի միասնական կատարմամբ:



Ծարունակութեան մէջ «Քանանեան» դպրոցի անունից Աւետիս Ահարոնեանի գրչին պատկանող «Յարգանք քեզ»-ը արտասանեց Նարէ Վարդանեանը եւ «Ծիծեռնակներին» բանաստեղծութիւնն ասմունքեց Ծաղիկ Մատթէոսեանը, իսկ «Կուունկ» երգը կատարեց Թանիա Մինասեանը:

Աշակերտական ելոյթները եզրափակուեցին «Կատարիներեան» դպրոցի աշակերտական խօսքով, որն ընթերցեց Արգիշտի Ղարիբեանի եւ Գեորգ Մովսիսեանի միջոցով:



Իր պատգամը փոխանցեց հոգշ. Տ. Արտակ արք. Արաբեանը, աշակերտներին յորդորելով, որպէս երիտասարդներ՝ առաւել լուրջ մօտենալ Հայոց ցեղասպանութեան խնդրին եւ հայ ազգի նպատակներին հասնելու համար լինել միասնական: Նա իր արտայայտութիւններն ասարտեց թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանի գնահատանքի խօսքով՝ ուղղած դպրոցի անձնակազմին եւ աշակերտութեանը: Վերջում հնչեց «Տէրունական» աղօթքը, ապա աշակերտները «Սարդարապատ»-ը երգելով իրենց ծաղիկները տեղադրեցին բիւրաւոր նահատակների յուշակոթողի մօտ:

Վերոնշեալ բոլոր ծրագրերին ներկայ էին նաեւ՝ ազգային մարմինների եւ 100-ամեակի ոգեկոչման միջոցառումների կազմակերպիչ ենթայանձնախմբերի ներկայացուցիչներն ու համայնքի անդամները: Սոյն միջոցառումները մեծ ուշադրութեան արժանացան Ս.Ա. վանքի թանգարան այցելած իրանցի եւ արտասահմանցի զբօսաշրջիկների կողմից:

Յովհաննիսեանի: Ներկայ էին բազում հաւատացեալներ, ովքեր ունկնդիրն եղան օրւայ առօրի արարողութեան կանոնի մէջ տեղ գտած գեղեցիկ շարականների, աղօթքների եւ անտարանական ընթերցումների, որոնք պատկերելով Քրիստոսի յաղթական մուտքը Երուսաղէմ՝ Նրա կատարած հրաշքներն ու փոխանցած աստածային ուսուցումներն էին յուշում:

Բազմաթիւ անտարանական ընթերցումներից, շարականներից եւ փոխասացութիւններից յետոյ, թեմակալ առաջնորդը Ս. Խորան բարձրացաւ եւ փակ վարագոյրի առջեւ ծուկնի եկած, բախեց երկնային արքայութեան դռները եւ «Բա՛ց մեզ, Տէ՛ր, զդուռն ողորմութեան...» հոգեգմայլ շարականի երգեցողութեամբ, Բարձրեալ Աստծուց Իր գթառատութիւնն ու ողորմածութիւնը հայցեց՝ որպէսզի Նա ընդունի մեր բոլորի ապաշխարանքն ու պահեցողութիւնը, Իր արքայութեան դռները բանայ մեզ վրայ եւ մեզ արժանի դարձնի Իր երկնային արքայութեան մէջ օթեանելու, որը «սկզբից իսկ պատրաստել է անարդարների համար»: «Ջողորմութեան Քո զդուռն բա՛ց մեզ...» շարականով բացեց Քառասնորդաց պահքի ընթացքում փակ մնացած վարագոյրը եւ Ս. Սեղանի առջեւ ընթերցեց արարողակարգի վերջին անտարանական հատւածը:

լով Աւագ երեքշաբթի՝ «Տասը կոյսերի առակ»-ի յիշատակի օրը, 2015 թականի մարտի 31-ի յետմիջօրէի ժամը 5:00-ին, Նոր Զուղայի Ս. Աստածածին, Ս. Ստեփանոս, Ս. Յովհաննոս եւ Ս. Մինաս եկեղեցիներում տեղի ունեցաւ եկեղեցական արարողութիւն, որին մասնակցել էին երիտասարդուհիներ՝ ներկայացնելով առակի տասը կոյսերը:



Առաջնորդ Սրբազան Հայրը նախագահեց Նոր Զուղայի Ս. Աստածածին եկեղեցում կատարող արարողութիւնը, որի ընթացքում ընթերցեցին ստեղծագործութեան եւ Նոյ նահապետի ու Զրիեղեղի աստածաշնչական դրագները, աստածապաշտութեան ճանապարհին իմաստութեան կարելորութիւնը շեշտող սուրբ-գրային հատւածներ եւ երկնքի արքայութեան մասին Յիսուսի պատմած «Տասը կոյսերի առակ»-ի անտարանական բաժինը: Վերջին ընթերցման պահին, եկեղեցական շապիկ հագած տասը երիտասարդուհիներ՝ առակի տասը կոյսերը ներկայացնելով, իրենց ձեռքում ունենալով մոմեր, որոնք խորհրդանշում էին փեսային դիմարելու ընթացքում կոյսերի վերցրած լապտերները, կանգնեցին եկեղեցու դասի առջեւ: Նրանցից ոմանք, որոնց յիմար վիճակը բաժին հասաւ, մարեցին իրենց մոմերը, պատկերաւոր կերպով առակը ներկայացնելով:



Արարողութեան ասարտին գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանն իր հայրական պատգամը փոխանցեց ներկայ հաւատացեալներին: Նա բացատրելով օրւայ խորհուրդը, յարութիւնից առաջ մի քանի օրերի ընթացքում Քրիստոսի կատարած գործերի եւ ուսուցումների իմաստը տեսաւ մարդու հոգու եւ մտքի աչքերը բանալու եւ մաքրագործելու երեւոյթի մէջ, ասելով, որ կոյրի աչքերին լուսաւորութիւն շնորհելը, Տաճարի մաքրագործումը անտարանականներից ու վաճառականներից խորհրդանշում են մարդու ներաշխարհի, հոգու եւ մտքի սրբագործումն ու ազատագրումը մեղքի կապանքներից, որն անհրաժեշտ պայման է երկնային արքայութեան մէջ մուտք գործելու համար: Առաջնորդ Սրբազան Հայրը յորդորեց բոլորին՝ լայն բանալ իրենց հոգիներն ու սրտերը՝ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսին այնտեղ ընդունելու համար:



Թեմակալ առաջնորդը, եկեղեցական արարողութեան ասարտին ներկաներին ու յատկապէս մասնակից երիտասարդուհիներին փոխանցեց իր պատգամը: Նա շեշտելով, որ եկեղեցական արարողութիւններին մասնակցելն ինքնին իմաստութեան նշան եւ ապացոյց է,

ՀԾՁԳ օժօժԹԶ՝ ԴԷՔ ՍԷՔԶԻԶԻ ԻԶԵՆ ԻՆՍԵՕԾԷ
 Աւագ շաբաթւայ արարողութիւնների շարքը սկսե-

գնահատեց իմաստուն եւ յիմար կոյսերը ներկայացնող երիտասարդուհիներին, եւ բացատրելով առակի իմաստը՝ թելադրեց միշտ արթուն ու պատրաստ լինել Տիրոջ ուրախութեանը մասնակից լինելու եւ Նրան դիմաւորելու, իսկ պատրաստութիւնը պէտք է լինի ամբողջ կեանքի ընթացքում՝ առաքինութեամբ եւ Աստծու պատկրանների համաձայն ապրելով:

ՀՁԶՂ ԾՔՄՂԻՔԶ՝ ԴԲԲ ՄԱՔԶԻ ԶԻ ԵԹ
ԾՁՕձձ, ձՕԴՕՁՄ, ձԻ ՄԵՁՄԱԵ ՕԴ ԵՁՁՁՁՁՄ

Ապրիլի 2-ին, Աւագ հինգշաբթի՝ Քրիստոսի Վերջին ընթրիքի յիշատակի օրը, առաւօտեան սուրբ եւ անմահ Պատարագ մատուցեց Ս. Ստեփանոս եւ Ս. Մինաս եկեղեցիներում: Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանը նախագահեց եւ յաւուր պատշաճի քարոզեց Ս. Մինաս եկեղեցում:

Ս. Ստեփանոս եկեղեցում, համայնքի անդամներից բացի ներկայ էին «Արմէն» երկսեռ տարրական դպրոցի, իսկ Ս. Մինաս եկեղեցում՝ «Քանաճեան» աղջ. միջնակարգ դպրոցի աշակերտներն ու պատասխանատուները:

Ս. Պատարագի ընթացքում գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանը նախ ընթերցեց Ս. Բարսեղ հայրապետի աղօթքը, ապա անդրադառնալով Ս. Հաղորդութեան խորհրդին, դիմեց ներկաներին՝ ի մասնատրի աշակերտներին եւ պատգամեց. «Հաղորդութիւնից յետոյ նոր մարդ դարձէք եւ միմեանց հետ վերաբերւէք սիրով ու յարգանքով, որովհետեւ այդպէս միշտ Աստուած մեզ հետ կը լինի, մենք իրար մէջ կը տեսնենք Աստծու մշտական պատկերն ու մեր կեանքում կիմաստաւորւի Ս. Հաղորդութեան խորհուրդը»:



Թեմակալ առաջնորդն իր խօսքի աւարտին աշակերտներին յորդորեց՝ Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին հայկական շնչով ու քրիստոնէական հաւատով ապրել ու իմաստաւորել իրենց կեանքը:

Վերջում ներկաները Ս. Հաղորդութիւն ստացան:

Նոյն օրը երեկոյեան, Ոսնլայի կարգը տեղի ունեցաւ Ս. Ստեփանոս, Ս. Ներսէս, Ս. Յովհաննու եւ Ս.

Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիներում: Սոյն խորհրդաւոր կարգի ընթացքում, Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի առթիւ, որպէս հայ ժողովրդի վերապրելու եւ գոյատեւման խորհրդանիշ, հոգեւոր հայրերը լացին տարբեր սերունդների ներկայացուցիչների ոտքերը:



Գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանը նախագահելով Ս. Ստեփանոս եկեղեցու արարողութիւնը, օրան պատշաճ իր քարոզում անդրադառնալով Ոսնլայի իրադարձութեանը, որ Քրիստոսը խոնարհութեամբ լաց էր աշակերտների ոտքերը, այսպէս արտայայտեց. «Քրիստոսը յեղաշրջեց ամբողջ մարդկային մտածելակերպը, պատգամելով, որ մեծութիւնը խոնարհութեան մէջ է: Ով իր անձը խոնարհեցնի, Աստծու աչքին նա կը բարձրանայ, իսկ ով իր անձը կը բարձրացնի, Աստծու աչքին նա կը խոնարհւի: Եւ սա է նւիրումի, ծառայութեան, զոհողութեան, խոնարհութեան ու յատկապէս սիրոյ պատգամը»:

Թեմակալ առաջնորդն իր քարոզի աւարտին աղօթեց առ բարձրեալն Աստուած, որ հայ ժողովրդին սրբելով ու մաքրելով՝ առաջնորդի դէպի խաղաղութիւն եւ յաւիտեանականութիւն:



Ոսնլայի արարողութեանը յաջորդեց Խաւարման հսկումի կարգը Ս. Ստեփանոս, Ս. Մինաս, Ս. Աստուածածին եւ Ս. Յովհաննու եկեղեցիներում, որը ողողւած էր խորհրդաւոր շարականներով, երգերով ու անտարանական ընթերցումներով:

ԱՍԵՆԱՍԵՆԱՅ ՀՈԳԵՎԱՆԳՍԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ՓԵՐԻԱ ԳԱԻԱՌԻ «ԼՈՒՍԱՎԱՆԳԻՍ» ՍՐԲԱՎԱՅՐՈՒՄ



արարողություն մատուցեց ուրբաթ՝ ապրիլի 10-ի առաւօտեան ժամը 10:30-ին, նախագահութեամբ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Ս. Բաբգէն արք. Չարեանի եւ մասնակցութեամբ հոգշ. Ս. Արտակ արդ. Արաբեանի, արժն. Ս. Խաչատուր քինյ. Ջարգարեանի եւ դպրաց դասի ներկայացուցիչների: Արարողութեանը ներկայ էին նաեւ Թեմի ազգային մարմինների ներկայացուցիչներն ու բազմահարիւր ուխտաւորներ:



Ս. Յարութեան տօնին յաջորդող կիրակի օրը՝ Կրկնազատկին, Փերիա գաւառի Ներքեի Խոյզան գիւղի մօտակայքում գտնուող «Լուսահանգիստ» սրբավայրում կատարուում է Հոգեհանգստեան արարողություն, իսկ վերջին տարիներին անելի շատ թուով ուխտաւորների մասնակցութիւնը ապահովելու նպատակով, ուխտագնացութիւնը տեղի է ունենում Կրկնազատկին նախորդող ուրբաթ օրը:

Կրօնական արարողութիւնից յետոյ, թեմակալ առաջնորդ Սրբազան Հայրը յիշելով հայ ազգի հին եւ նոր ննջեցեալներին՝ ի մասնաւորի Հայոց ցեղասպանութեանը զոհ գնացած 1.5 միլիոն հայորդիներին՝ իր հայրական պատգամն ուղղեց ներկաներին: Գերշ. Ս. Բաբգէն արք. Չարեանն իր խօսքի սկզբնական բաժնում անդրադարձաւ մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի կեանքին, իրականացրած մի շարք հրաշքներին, խաչելութեանը եւ յարութեանը, ապա նշելով, որ հայ ազգն առաջին ժողովուրդը եղաւ, որն ընդունեց քրիստոնէութիւնը, կոչ արեց՝ Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին ամրապնդել հաւատքի մէջ, յիշել մեր նահատակներին, առաջնորդել նրանց կտակով եւ պահանջատիրական պայքարը շարունակել այնքան ժամանակ, քանի դեռ մեզանից խլած են մեր արդար իրաւունքները:



«Լուսահանգիստ» սրբավայրում թաղւած է քրիստոնէական հաւատի համար նահատակւած Գրիգոր անունով մի հաւատացեալ, որի շիրիմի վրայ ժամանակին կառուցել է փոքր մատուռ, իսկ 2014 թականին մատուռը համալրուել է երկու մոմավառութեան սենեակներով: Այս տարի «Լուսահանգիստ» սրբավայրում Հոգեհանգստեան

Վերջում ուխտաւորներն աղօթեցին, մոմ վառեցին եւ խունկ ծխեցին նահատակ Գրիգորի գերեզմանի վրայ, որից յետոյ պայծառ եւ հանելի օրը վայելեցին բնութեան գրկում հանգրւանելով:

ՄԱՅՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ՆԻՐԻՔԾ ԵՐԵԿՈՑ՝ ՀԱՅՈՑ ԼԳՉԱԼՅԻՆ ՄԱՆԿԱՊԵՐՏԷՉ-ՆԱԽԱԿՐԹ-ԿՐԱՆԻ ՊԵՏԱԽԱՆԱՆԱՏՈՒՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ



Հիգշարթի՝ ապրիլի 9-ի երեկոյեան ժամը 5-ին, Նոր Զուղայի հայոց ազգային մանկապարտէզ-նախակրթարանի տեսչութեան, ուսուցչական կազմի եւ ծնողական խորհրդի նախաձեռնութեամբ, հայոց ազգային կրթահամալիրի «Ալեմուշ Տէրեան» սրահում, Մայրութեան տօնի առթիւ գեղեցիկ միջոցառում իրականցւեց՝ յագեցած սաների գեղարուեստական կատարումներով եւ բանախօսական ելոյթով: Ծրագրի հիւրերն էին դպրոցի աշակերտութեան մայրերն ու տատիկները:

իրենց կեանքը եւ քաջօրէն փրկել իրենց սիրասուն գաւակներին՝ հեռացնելով նրանց թշնամու կրակից: Յարգանք նրանց անմոռաց յիշատակին»:

Բացման խօսքին յաջորդեց աշակերտական ելոյթը, որտեղ նախակրթարանի աշակերտներն ու մանկապարտէզի Մանուշակագոյն եւ Դեղին խմբակների սաները միասնաբար մօրը եւ տատիկներին նկատելի երգերից ու արտասանութիւններից կազմած մի գեղեցիկ փունջ նկերեցին սրբութեան ու զոհողութեան խորհրդանիշ բոլոր հայ մայրերին՝ ի մասնատրի սրահում ներկայ իրենց հարազատներին՝ խորապէս յուզելով նրանց:



Սկզբում երեկոյի բացման խօսքն արտայայտեց ուսուցչուհի Անետ Ղազարեանը, ով դահիլճում ներկաներին շնորհատրելով առիթի կապակցութեամբ, ասաց. «*Ձեր տօնն է այսօր մայրեր սրբածին ու հերոսածին, որ մեր հին ու նոր պատմութեան մէջ եղել էք ազգի պահպանման սիւները... Մենք այսօր նաեւ երախտապարտ ենք մեր այն մեծ տատիկներին, ովքեր դար առաջ, պայքարելով ոսոխի դէմ, գոհել են*



Այնուհետեւ օրայ բանախօսական ելոյթն իրականցւեց դպրոցի ծնողական խորհրդի անդամուհիներ՝ Սոնիա Դիլանջեանի, Արսինէ Յովսէփեանի եւ Մանիֆա Խուրաբախշեանի միջոցով: Ելոյթն սկիզբ առաւ ողջունի եւ շնորհատրանքի ջերմ խօսքով՝ ուղղւած մայրերին, տատիկներին եւ յատկապէս երկրորդ մօր կոչումը կրող ուսուցչուհիներին: Ապա բանախօսները հերթաբար ծաւալելով նիւթը՝ անդրադարձան հիթաճոս Հայաստանում մայրութեան աստուածուհի Անահիտին, ապրիլի 7-ին՝ որպէս Ս. Մարիամ Աստուածածնի անտման տօն, մօր առաքելութեանն ու յատկանիշներին՝ իբրեւ սրբութեան, նկրումի, անկեղծ սիրոյ, զոհողութեան եւ հայրենասիրութեան խորհրդանիշ, Հայոց ցեղասպանութեան տարիներին ապրող հայ մօր անփոխարինելի դերակատարութեանը ազգի պահպան-

**ԻՏԱԼԱԿԱՆ RAI ՊԵՏԱԿԱՆ ՈԱՂԻՑ-ՐՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԼՐԱԳՐՈՂ
ԱՅՑԵԼԵՑ Ն.Ջ. ՀԱՅ Մ.Մ. «ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹԻՒՆ**

Հինգշաբթի՝ ապրիլի 16-ին, ժամը 19:30-ին, իտալական Rai պետական ուղիւ-ընկերութեան լրագրող՝ Քարմելա Զիգլիօն եւ նրան ընկերակցող աշխատակազմը այցելեցին Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան կենտրոնատեղի, որոնք նախ շրջեցին միութեան բաժանմունքները, ապա Կենտրոնական գրասենեակում հիւրընկալեցին միութեան Կենտրոնական վարչութեան ներկայացուցիչների եւ միութեան թղթակցի կողմից: Այցի նպատակն էր ուղիւ-հաղորդում պատրաստել Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան եւ ընդհանրապէս Նոր Զուղայի մասին:

Լրագրողը հարցազրոյց ունեցաւ Կենտրոնական վարչութեան անդամ եւ Իրանի կանանց բասկետբոլի մարզիչ Ալլին Մելիքեանի հետ, ով բացադրութիւններ փոխանցեց միութեան մարզական կեանքի, ինչպէս նաեւ համահայկական խաղերի կապակցութեամբ, յատկապէս նշեց Հայաստանում իրականացուող Համահայկական խաղերին մասնակցելու առումով Իրանի պետութեան հովանաւորութեան մասին:

Վարչութեան քարտուղար Միգանուշ Տէր-Մարտիրոսեանն ընդհանուր գծերով անդրադարձաւ միութեան դրածքին ու աշխատանքներին, յատկապէս կենտրոնացաւ Հայոց ցեղասպանութեանը նկրած ծրագրերին: Նա կարեւորութեամբ ընդգծեց թւականիս ապրիլի 15-ին, Վատիկանի Ս. Պետրոս տաճարում Հայոց ցեղասպանութեանը նկրած պատարագի ընթացում Հռոմի պապի ելոյթը, որով Հռոմի Պապը 1915 թականին տեղի ունեցածը որակել է Ցեղասպանութիւն եւ ողջունեց Հռոմի Պապի կողմից Հայոց ցեղասպանութեան ճանաչելու կարեւոր երեւոյթը:

Մշակութային միաւորի կապ Լորեթա Դաւթեանը բացադրութիւններ փոխանցեց մշակութային միաւորի աշխատանքների եւ Իրան-Հայաստան մշակութային

կապերի մասին, նաեւ Հայաստանում իրականացող մշակութային փառատօներին միաւորի խմբերի մասնակցութեան կապակցութեամբ, իսկ վերջում տեղեկութիւններ հաղորդեց Հայոց ցեղասպանութեանը նկրած մշակութային միջոցառումների վերաբերեալ:

Միութեան թղթակից Երանուշ Թահմազեանը, ընդհանուր գծերով ներկայացրեց Նոր Զուղայի հայ համայնքի դրածքը, անդրադարձաւ Իրանում լոյս տեսնող հայկական լրատւամիջոց՝ «Ալիք» օրաթերթին, ինչպէս նաեւ Նոր Զուղայում հրատարակող «Նոր Զուղայի տեղեկատու» երկամսեայ պարբերականին, որոնց հետ համագործակցում է թղթակիցը, ապա ներկայացնելով ապրիլի 13-ին «Ալիք» օրաթերթում լոյս տեսած համարը, նշեց Հռոմի Պապի ելոյթի արձագանքը հայկական լրատւամիջոցներում:



Rai ուղիւ-ընկերութեան լրագրողին հետաքրքրեց «Ալիք» օրաթերթի ճակատում տեղադրած Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցի լոգոտիպը՝ անմոռուկ ծաղիկը, որի խորհրդանշական իմաստի մասին եւս բացադրութիւն տրւեց նրան, իսկ զրոյցին մասնակիցները պատասխանելով տարածաշրջանում տեղի ունեցող իրադարձութիւնների ուղղութեամբ կատարած հարցադրումներին՝ ասացին, որ ցաւալի է, որ դեռեւս իրականացում են նման ոճրագործութիւններ եւ չեն ցանկանում, որ որեւէ ժողովրդի նկատմամբ տեղի ունենայ նման ողբերգութիւն: Նրանք համոզում յայտնեցին, որ քանի դեռ Թուրքիան չի ճանաչել Հայոց ցեղասպանութիւնը եւ միջազգայնորէն չի դատապարտել այն, աշխարհում դեռ ականատեսն ենք լի-նելու նման անմարդկային երեւոյթների:



րելով ներկաներին Ս. Յարութեան և Մայրերի տօների առթիւ, իր բանախօսական նիւթը ծաւալեց անդրադառնալով հայ մօր կերպարին մեր գրականութեան մէջ և նրան բնորոշող յատկութիւններին՝ հերոսականի և ողբերգականին:



Դկտր. Ալլահվերդեանն սկզբում ներկայացրեց նախաքրիստոնէական շրջանի մայրութեան աստածունի Անահիտին, ապա անդրադարձաւ հայոց պատմութեան մէջ մեծ դերակատարութիւն արձանագրած հայուհիներին՝ թագուհիներին, կոյսերին և հերոսուհիներին:

Բանախօսն անցում կատարելով միջնադարեան գրականութեանը, նշեց որ այս փուլում հոգեւոր գրականութիւնից բացի սկիզբ է առել աշխարհիկը և ներկայացրեց Գրիգոր Նարեկացու «Ծննդեան մեղեդի» տաղը, որում նկարագրած գեղեցիկը՝ բնորոշում է Ս. Կոյս Մարիամին: Ներկայացրեց նաև Մայր Հայաստան դիմաւորութիւնը և Մայր Հայաստան արձանը, որտեղ հայ մայրը փոխան իր զաւակի իր գիրկն է առել սուրը, որը պիտի փոխանցի իր որդուն՝ հայրենիքը պաշտպանելու համար:



Ահա մի հատուածի մէջբերում բանախօսական ելոյթից.

«19-րդ դարի 50-60-ական թւականներին ակնառու են գինեալ պայքարները Սասունի, Զէյթունի և այլուր, որոնցում դարձեալ դերակատար են եղել Հայ աւրիկանայք, որոնք իրենց ամուսիններին ու որդոց ուղարկել են պատերազմի դաշտ և հարկ եղած պարագային իրենք զէնք վերցրել և նաեւ յանձն առել պայքարի հրամանատարութիւնը: Նոր գրականութեան

չրճանը սկիզբ է առել արեւելահայերէնում՝ Խաչատուր Աբովեանից և արեւմտահայերէնում՝ Ղեւոնդ Ալիշանից: Սակայն Հայոց ցեղասպանութեան հետեւանքով արմատախիլ եղաւ արեւմտահայ այն գրականութեան աճը, որը կարողարով ապշել կարելի է, որը ունէր երիտասարդ, բայց ճարտար գրողներ՝ Սիւսանյան, Վարուժանը և...: Սա Հայոց ցեղասպանութեան թողած հետքերն են մեր գրականութեան վրայ»:

Դկտր. Ալլահվերդեանն իր խօսքն աւարտեց Յովհաննէս Ծիրազի «Դանթէական առասպել» ստեղծագործութեան մի հատուածով, որտեղ ներկայացնում էր թէ ինչպէս հայ մայրը համառօրէն անապատի աւազների վրայ անգամ հայ գրերն է ուսուցանել իր զաւակներին: Յատկանշելի է, որ բանախօսութեան ընթացքում ցուցադրում էին համապատասխան պատկերներ:



Բանախօսութեանը յաջորդեցին գեղարւեստական համարները, դերակատարութեամբ Հայուհեաց Բարեգործական ընկերութեան «Փարոս» ասմունքի խմբի՝ ղեկավարութեամբ դկտր. Սիլա Ալլահվերդեանի, դաշնակահար և խմբավար Համիկ Ալեքսանդրեանի, ազգային-յեղափոխական երգերի կատարող՝ Արթին Քեշիշեանի, Թեհրանից հրաիրուած երգչուհի Մելանիա Աւանէսեանի և Թեհրանի «Զարթօնք» պարխմբի՝ Լորետա Աւանէսեանի պարուսուցմամբ:



Ծրագրի ընթացքում հնչեցին բանաստեղծական կտորներ, որոնք ասմունքեցին Վանա Զոհրաբեանը, Նարեգա Սիմոնեանը, Մեղրի Կարապետեանը, Վանիա Պետրոսեանը, Վանէ Ծահնագարեանը և Վանէ Թահմազեանը: Մելանիա Աւանէսեանը երգեց «Դու

ինձ օրհնիր», «Կիլիկիա» եւ «Միասնութեան շուրջ-պար» երգերը, Արթին Քեչիշեանը նազակցութեամբ Համիկ Ալեքսանդրեանի կատարեց «Ախալքս ու ես» երգը՝ այն նկերելով Արցախեան պատերազմի նահատակներին, իսկ Համիկ Ալեքսանդրեանը կատարեց մօրը նկիրած մի երգ:



Պարային համարներ իրականացւեցին «Զարթօնք» պարախմբի միջոցով, որոնց զուգահեռ հնչեցին ասմունքներ Սիփան Մկրտումեանի կատարմամբ:

Գեղարեստական համարներն ընդմիջում էին տեսանկյունով եւ դրանց զուգահեռ ընթերցող բանաստեղծութիւններով, որոնք ներկայացնում էին Հայոց ցեղասպանութիւնից դուրս գալու եւ Հայոց պատմութեան ակնառու կանանց:

Գեղարեստական յայտագրով ծրագիրը ներկաների կողմից արժանացաւ բարձր գնահատանքի, դերակատարներն արժանացան հանդիսատեսի շարունակական ծափողջուններին եւ ընկերութեան կողմից նրանց յանձնուեց շնորհակալագրեր:

Հանդիսութեան ասարտին իր պատգամը փոխան-

ցեց հոգշ. Տ. Արտակ արք. Արաբեանը, ով կնոջը ներկայացնելով դիցաբանական եւ պատմաբանական տարբեր հոլովոյթներում, ասաց. «Կանայք պատմութեան մէջ եղել են աստուածուհիներ, թագուհիներ եւ իշխանուհիներ, բայց ամէն բանից առաջ նրանք եղել են մայրեր: Մենք մեր գոյութիւնը պարտական ենք մայրերին, իսկ որպէս հայրեր մեր ներկայութիւնն ու գոյութիւնը պարտական ենք հայ մայրերին... Մայրութիւնը ժամանակ չի ճանաչում եւ ամէն բանի սկիզբն ու աւարտը մայրն է»:



Հոգշ. Հայր Սուրբը փոխանցեց նաեւ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարգէն արք. Զարեանի շնորհաւորանքներն առիթի կապակցութեամբ եւ հայրական գնահատանքն ու գովասանքը՝ Հայուհեաց Բարեգործական ընկերութեան այս գեղեցիկ քայլի համար:

Հարկ է նշել, որ սոյն ձեռնարկի իրականացման համար Հայուհեաց Բարեգործական ընկերութիւնը վայելել էր բոլոր դերակատարների սիրայօժար համագործակցութիւնը:



ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻՆ ՆԻՒՐԻԱԾ ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ՝ ՀԱՅ ՈՒՍ. ՉՀԱՐՄԱՀԱԼ ՄԻՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՄԱՍՆԱԾԻՂՈՒՄ



Նախաձեռնութեամբ Հայ Ուս. Չհարմահալ միութեան Նոր Զուղայի մասնաճիւղի վարչութեան, ուրբաթ՝ ապրիլի 17-ի երեկոյեան ժամը 7-ին, նոյն միութեան հաւաքատեղիում Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին նկիրած դասախօսական երեկոյ իրա-

կանացեց՝ հոգշ. Տ. Արտակ արք. Արաբեանի դասախօսութեամբ:

Ծրագրին որպէս ունկնդիրներ ներկայ էին՝ արժն. Տ. Մեսրոպ առ. քհնյ. Գալստանեանը, Սպահանի հայոց թեմի Կրօնական խորհրդի ատենապետ Արշալոյս Խուդավերդեանը, Փերիոյ կրթ. միութեան կենտրոնական վարչութեան նախագահ Հայկ Հայրապետեանը, միութեան անդամ-ուիիները եւ մի շարք հրաւիրեալներ:

Որպէս նախաբան միութեան կրտսեր անդամուիներից Վեհանուշ Խուդաբախշեանը ասմունքեց Յովհաննէս Թումանեանի «Հոգեհանգիստ» բանաստեղծութիւնը, ապա մասնաճիւղի վարչութեան նախագահ Սերոժ Վարդանեանը ողջունելով ներկաներին, շեշտեց, որ իւրաքանչիւր հայ պարտականութիւն ունի «Յիշում եմ եւ պահանջում» նշանաբանի ներքոյ իր լու-

ման ներդրի պահանջատիրական պայքարում՝ իր ծայրն միացնելով համայն հայութեան արդար ծայրին:

Այնուհետև օրապ հասախօսական ելույթով հանդես եկա հոգշ. Տ. Արտակ արք. Արաբեանը, ով սկզբում անդրադառնալով «Ցեղասպանութիւն» բառին, որն առաջին անգամ օգտագործել է Ռաֆայէլ Լեմբինի միջոցով, իր խօսքը շարունակեց պատմական ակնարկ ունենալով Հայոց ցեղասպանութեանը՝ յատկապէս շեշտելով այդ տարիներին Արեւմտահայաստանի տարածքում ապրող հայութեան քաղաքական ու հասարակական վիճակը եւ հայութեան զանգուածային կոտորածների իրականացման դրդապատճառները:

խանցել է սերնդէ սերունդ:



Այս անդրադառնալով Դանիէլ Վարուժանի կեանքի անկլինադարձային հանգրւաններին եւ նրա արժանիքների մասին այլազգի մտաւորականների վկայութիւններին, ասաց, որ Դանիէլ Վարուժանի գրութիւններում կարող ենք կարդալ ամբողջ հայոց պատմութիւնը եւ տեսնել սովորական հային: Նա ակաւացրեց, որ Վարուժանի «Ցեղին սիրտը» հաւաքածուի մէջ ոչ միայն տեսնում ենք նրան որպէս հասունացած մարդ, այլեւ այնտեղ տեսնում ենք ազգային պայքարի մտաւորականի հասունութիւնն ու մտքի եւ գաղափարների բարձրացումը:

Վերջում հոգշ. Հայր Սուրբն յորդորեց ընթերցել հայ մտաւորականների, ի մասնաւորի Դանիէլ Վարուժանի ստեղծագործութիւնները, քանի որ դրանց հետ կարելի է մեծանալ թէ մտաւորապէս եւ թէ հոգեպէս:

Երեկոն ավարտեց հիւրասիրութեամբ:



Հոգշ. Հայր Սուրբն իր նիւթի շարունակութեան մէջ Ցեղասպանութիւնից վերապրածների յուշերից մէջբերումներ կատարելով՝ յիշատակեց նաեւ այն խորը տառապանքը, որը տեսել եւ զգացել են Ցեղասպանութեան ճիրաններից փրկւածները, ինչը յետագային փո-



ԿԱՐՆԱՆԱՅԻՆ ԲԱՆԱԿՈՒՄ ԸԱՏԻՆՇԱՏՐՈՒՄ

Հովանաւորութեամբ Ծահինշահրի հայ համայնքային վարչութեան եւ նախաձեռնութեամբ համայնքի Հայոց ազգային «Սրբոց Վարդանանց» եւ «Մասիս» դպրոցների ուսուցչական կազմի եւ Ծնողական խորհրդի, երեքշաբթի՝ 2015 թականի մարտի 17-ի առաւօտեան ժամը 9-ին տեղի ունեցաւ վերոնշեալ դպրոցների աշակերտ-ուհիների գարնանային բանակումի բացումը՝ ծնողների եւ կազմակերպիչների ներկայութեամբ:

Բանակումի բացումը կատարեց ազգային օրհներգով, որից յետոյ դպրոցի հայերէն բաժնի փոխտեսուչ պրն.

Ջանիկ Թահմազեանը բարի գալուստ մաղթելով բոլոր մասնակիցներին բացատրեց նրանց բանակումի նպատակը եւ ուրախ բանակում մաղթեց բոլորին:

Սույն երկօրեայ բանակումին, որին մասնակցել էին շուրջ 55 աշակերտ-ուհիներ ուսուցիչների ղեկավարութեամբ իրագործեց մշակւած յազեցած ծրագիր, որի ընթացքում մասնակիցներն ունեցան ֆիզիքական մարզումներ, մշակութային աշխատանք, զբօսապատմական զբօսներ, մրցոյթներ, խրախուճանք եւ զարճալի խաղեր:

Հարկ է նշել, որ այս բանակումի իրագործմանն իրենց սիրայօժար համագործակցութիւնը ցուցաբերեցին մի քանի ծնողներ:



ցը համարեց: Սիրելի՛ երեխաներ, դուք բոլորդ էլ իմաստուն էք, որովհետեւ ունեք Քրիստոսի առաջնորդութիւնը: Եթէ իմաստուն չլինէիք՝ հիմա այսօր այս խորանի առջեւ կանգնած չէիք լինի»: Այա հոգշ. Հայր Սուրբը բոլոր երիտասարդ-ուհիների համար մաղթեց, որ Քրիստոս նրանց կեանքը վառ մոմերի պէս միշտ լուսաւոր պահի, միշտ Աստուած նրանց առաջնորդը լինի, որպէսզի իրենք եւս այդ մտքով ապրեն իրենց հաւատը Քրիստոսի փառքի եւ Աստծու թագաւորութեան համար:

Ապրիլի 3-ին Աւագ Հինգշաբթի օրը, առաւօտեան Ս. եւ անմահ Պատարագ մատուցեց Ծափնշահրի Հայոց եկեղեցում հոգշ. Հայր Սուրբի միջոցով, տեղի ունեցաւ հաւաքական խոստովանանք եւ ներկաներն ստացան Ս. Հաղորդութիւն:



Նոյն օրուայ երեկոյեան կատարեց Ոսնկլայի հանդիսաւոր արարողութիւնը: Այս տարի Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի առիթով, Ոսնկլայի արարողութեանը մասնակից դարձան իրարայաջորդ չորս սերնդի ներկայացուցիչները: Արարողութեան ընթացքում Ծափնշահրի Հայ կանանց եկեղեցասիրաց միութեան անդամների միջոցով պատրաստած իւրը բաժանեց հաւատացեալներին:

Ոսնկլային յաջորդեց Խաւարման երկարաժամ կարգը, որի ընթացքում ընթերցեցին աւետարանական եօթ ընթերցումը՝ Քրիստոսի մատնութեան, չարչարանքի եւ խաչելութեան վերաբերեալ, երգեցին յաւուր պատշաճի շարականներ եւ երգեր:

Արարողութեան ընթացքում, երբ արդէն մարած էին եկեղեցու լոյսերը, Հայր Սուրբն իր բովանդակալից ու խորիմաստ քարոզն ուղղեց հաւատացեալներին:

Ապրիլի 4-ի երեկոյեան, Աւագ շաբաթ օրը, Ս. Զատկի Ծրագալոյցին, մատուցեց Ս. Պատարագ՝ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունանեանի միջոցով: Հաւաքական խոստովանանքից եւ Ս. Հաղորդութիւնից յետոյ, հնչեց «Այսօր յարեաւ ի մեռելոց» շարականը, որով արդէն փոխանցում էր Քրիստոսի Յարութեան աւետիսը բոլորին:

Կիրակի՝ ապրիլի 5-ին, Յիսուս Քրիստոսի հրաշափառ Յարութեան տօնի՝ Ս. Զատկի առթիւ հանդիսաւոր սուրբ եւ անմահ Պատարագ մատուցեց Սպահանի հայոց թեմի թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանի ձեռամբ, ում սպասարկում էին հոգշ. Տ.

Անանիա վրդ. Գունանեանը եւ բրշն. Ռազմիկ սրկ. Գալստանեանը:



Հոգեպարար արարողութեան ընթացքում, քարոզի պահին, գերշ. Սրբազան Հայրը Ս. Զատկուայ տօնի առթիւ իր պատգամի մէկ բաժնում ասաց. «Հայ ժողովուրդն առաջինը եղաւ, ով հաւատաց Քրիստոսի Յարութեանը, Նրա պատրաստած նոր, ճշմարիտ ու վաւերական կեանքին: Տառապեց, չարչարեց, փոթորիկների հանդիպեց, նոյնիսկ ցեղասպանութեան ենթարկեց, բայց չդադարեց Քրիստոսի Յարութեանը, վաղևայ արշալոյսին, նոր կեանքին ու յարութեանը հաւատալուց»:

Յաւարտու Ս. Պատարագի գերշ. Սրբազան Հայրը, հոգշ. Հայր Սուրբի, դպրաց դասի եւ համայնքի «Նարեկ» երգչախմբի կազմած թափօրով դուրս եկաւ դպրոցի բակ եւ պատրաստած զատկական տաղաւորի մօտ, ընթերցեց Աւետարանը եւ «Այսօր յարեաւ» շարականի երգեցողութեամբ բոլորին շնորհաւորեց Քրիստոսի հրաշափառ Յարութիւնը:



Այնուհետեւ դպրոցի միջնաարահում հաւատացեալների շնորհաւորանքներն ընդունելուց յետոյ, թեմակալ առաջնորդը Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի «Անմոռուկ» խորհրդանշանով պարգեւատրեց Համայնքի վարչութեան եւ Մեծ եղեռնի 100-ամեակի ոգեկոչման յանձնախմբի անդամներին՝ բարձր գնահատելով նրանց ազգանւէր աշխատանքը:

Մեծ պահքի եւ Աւագ շաբաթուայ եկեղեցական բոլոր արարողութիւնների երգեցողութիւնները կատարեց համայնքի «Նարեկ» երգչախումբը:

չոցաումանը՝ ոյժ ու կորով մաղթեց նրանց, Ոգեկոչման յանձնախմբի անդամներին եւ բոլոր նրանց, ովքեր հաղորդակից են դառնում ազգանէր աշխատանքներին:

Զարգարեանի ձեռամբ եւ Շահինջահրի «Նարեկ» երգչախմբի երգեցողութեամբ:



Սրահում տեղադրած ցուցատախտակների վրայ գեղեցկօրէն ցուցադրել էին աշակերտ-ուսիների նկարած պատկերները, որոնց մէջ նշմարում էին ազգասիրութեան, հայրենասիրական եւ պահանջատիրական ոգին: Ցուցահանդէսի նկարչութիւններն արժանացան այցելուների բարձր գնահատանքին:

Հոգեհանգստեան արարողութիւնից յետոյ, բացման խօսքով հանդէս եկաւ յանձնախմբի անդամ եւ օրւայ համահաւաքի հաղորդավար տկն. Վարդուհի Պօղոսեանը:

Իսկ Ոգեկոչման յանձնախմբի դասաւորումով, այցելուներին առիթ ընձեռնեց իրենց նկարչութիւններով մասնակցել կազմակերպած ցուցահանդէսին, որի ընթացքում ցանկացողները մատաղ սերնդի հետ կողք-կողքի հետաքրքիր նկարչութիւններ կատարեցին:

Հայ համայնքի վարչութեան անունից օրւայ խօսքն ընթերցեց պրն. Արմոնդ Հախնազարեանը, որտեղ ասել էր. «Մեծ սպանդից փրկած հայ ժողովուրդը, թէեւ սփռուազրւած, բայց որպէս ազգ ծլարձակելու եւ գոյատեւելու մեծ հեռանկարով եւ խորին հաւատով, հաւաքագրելով ու ի մի բերելով իր գաւազներին ոյժն ու կորովը՝ յանուն իր ոտնահարած իրաւունքների, բռնեց պայքարի ուղին եւ 20-րդ դարի վերջին տասնամեակի իր պատմութիւնը պսակեց փայլուն յաղթանակներով՝ ցոյց տալով թշնամուն, որ 20-րդ դարավերջի հայն այլեւս 20-րդ դարասկզբի հայը չէ... Այսօր Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին, նորովի ուխտով եւ հաւատով շարունակենք մեր նւիրական պայքարը յանուն մեր մորթւած անմեղ ժողովրդի արեան վրէժխնդրութեան, մեր ազգի ոտնահարած իրաւունքների վերականգման եւ ազատ, անկախ եւ ամբողջական Հայաստանի վերահաստատման»:

Հ ԺՅԵՒՅ 21, ՀԻՉԻ օժԻ Ս օժԵԻ ՀՕԻ օՇՉԻ ԱՄՍ



Երեքշաբթի՝ ապրիլի 21-ի ժամը 13-ին, Շահինջահրի Ոգեկոչման յանձնախմբի համադրումով, «Սրբոց Վարդանանց» եւ «Մասիս» դպրոցների աշակերտութիւնը՝ ուսուցչական կազմի, Ծնողական խորհրդի գլխատրութեամբ եւ համայնքի մի խումբ անդամների ուղեկցութեամբ մասնակցեցին Նոր Զուղայի Ս. Ամենափրկչեան վանքում կազմակերպած դպրոցական ծաղկեմատուցին եւ գեղարեստական ձեռնարկին:



Հ ԺՅԵՒՅ 22, ԾԵԻ ԱՕՇ օժԻ ՀՕԻ օՇՉԻ ԱՄՍ

Ապրիլի 22-ի երեկոյեան, Շահինջահրի հայոց ազգային «Սրբոց Վարդանանց» դպրոցի շրջափակում, Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակին կառուցած յուշարձան-խաչքարի առջեւ համախմբւած հայորդիները մասնակցեցին հոգեհանգստեան արարողութեան, որը կատարեց արժն. Տ. Խաչատուր քինչ.

Այնուհետեւ ընթերցեց Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի ոգեկոչման յանձնախմբի խօսքը՝ տկն. Մատիթա Քեշիշեանի միջոցով, որը պարունակում էր

Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցի Համահայկական հռչակագիրը:



Համայնքում աշխատող միութիւնների եւ երգչախմբերի վարչութիւնների կողմ մի ընդհանուր համատեքստով ընթերցեց տկն. Այդա Մուրադեանը:

Իսկ վերջում աշակերտուհի Ադենա Մուրադեանը դպրոցի անձնակազմի եւ աշակերտութեան անունից իր կոչն ուղղեց համահաւաքի մասնակիցներին:



Բողոքի համահաւաքի եւ ծաղկեմատոյցի ընթացքում Հայոց ազգային «Նարեկ» մանկապարտէզ-նախակրթարանի եւ «Սրբոց Վարդանանց» դպրոցի աշակերտ-ուհիները խմբերգերի եւ ասմունքների կատարումով իրենց պահանջատիրութիւնը յայտնեցին:



Ապա Ոգեկոչման յանձնախմբի դասատրումով հայրդիները ծաղիկներով եւ վառւած մոմերով՝ ակնածութեամբ մօտենալով խաչքար-յուշարձանին, խնկարկեցին բիրաւոր նահատակների յիշատակին: Համահաւաքից յետոյ դպրոցի սրահում ցուցադրեց վաւերագրական տեսանիւթ՝ Հայոց ցեղասպանութեան վե-

րաբերեալ:

Հինգշաբթի՝ 23-ի ժամը 16:30-ին, Ծախին-շահրի Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի Ոգեկոչման յանձնախմբի նախաձեռնութեամբ՝ Հայ Համայնքի Վարչութեան եւ համայնքի հայրդիների ուղեկցութեամբ կազմակերպւեց ատոռքերթ դէպի Նոր Զուղա՝ Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան կենտրոնատեղիում դիտելու Մայր աթոռ Ս. Էջմիածնից հեռարձակող Հայոց ցեղասպանութեան բիրաւոր նահատակների Սրբադասման արարողակարգը:



Այնուհետեւ նրանք Նոր Զուղայի հայրենակիցների հետ մասնակցեցին վերոյիշեալ միութեան կենտրոնատեղիից դէպի Ս. Ամենափրկչեան վանք կազմակերպւած մոմերի լոյսերի ներքոյ քայլերթին եւ ներկայ գտնւեցին Վանքում կատարող Հսկման արարողութեանը եւ կազմակերպւած գեղարեստական ձեռնարկին:

Հինգշաբթի՝ 24



Ծախինշահրի հայ համայնքը մասնակցեց Նոր Զուղայի Ս. Ամենափրկչեան վանքում կազմակերպւած ծաղկեմատոյցին, բողոքի համահաւաքին ու քայլարշախին:

ՆԻՐԱՏԻՈՒԹԻՒՆՆԵՐ

Սպահանի հայոց թեմի Կրօնական խորհուրդ

Լուսահանգուտի ուխտագնացութեան առթիւ

- 500,000-ական ուխալ. Մանան Ղազարեան, Մասիս Դիլանջեան, Դիլանջեան, Վազրիկ Մարկոսեան
- 300,000-ական ուխալ. Յարութ Դուկասեան՝ իր մօր՝ Արեւիկ Մկրտչեանի յիշատակին, Ռուբէն Մարկոսեան, Զաւէն Մուրադեան, Յովհաննէս Խողալվերդեան
- 250,000 ուխալ. Արսէն Ծահրազեան
- 200,000-ական ուխալ. Արդիթ Ամրիանեան, Յովսէփ Աւետեան, Մինաս Թահմազեան, Յակոբ Մարկոսեան, Նարդ Յակոբեան, Մարգարիտ Մինասքանեան, Արգին եւ Մանիա Մետրոպեաններ, Արտուշ Յակոբեան
- 150,000 ուխալ. Ռոբերթ Ղարախանեան
- 100,000-ական ուխալ. Ալազեան, Վարդան Մանուկեան, Մասիս Մկրտչեան, Հիլդա Թահմազեան, Անետ Ղազարեան, Արմինէ Թահմազեան, Մարթան Դարաբիդեան, Անուշ Տէր Յովհաննիսեան եւ Արգինէ Թահմազեան, Արուսեակ Պողոսեան, Անի Թորոսեան
- 50,000 ուխալ. Գեոզալ Ազարեան

Սպահանի հայոց թեմի Կրթական խորհրուդ

- 15,000,000 ուխալ. Ն.Զ. Հայ կանանց գթութեան միութիւն «Ալեմուշ Տէրեան» սրահի ղեկավարման սենեակի համար ուղիղ հեռարձակման հեռուստացոյցի համակարգ գնելու նպատակով

Ն. Զ. Հայոց գերեզմանասան քարեպարդման մարմին

- 1,000,000-ական ուխալ. Սաթօ Յակոբեան՝ Թագուշ Սարգսեանի յիշատակին, Տէր Մկրտչեան ընտանիք՝ Նարդ Խաղուլեանի յիշատակին
- 500,000-ական ուխալ. Վազրիկ Մարկոսեան, Վարուժ եւ Սթելլա Վարդանեաններ, Վարդան Ալեքսանդրեան՝ Հիլդա Մարգարեանի յիշատակին, Պողոս Թահմազեան՝ Արսէն Թահմազեանի յիշատակին, Ժորժ Ղազարեան, Վահիկ Թահմազեան՝ Արմենուհի Բաղդասարեանի յիշատակին, Սուրէն Մինասեան
- 350,000 ուխալ. Տ. Մետրոպ քինյ. Գալստանեան
- 300,000 ուխալ. Վազրիկ Վարդանեան
- 250,000-ական ուխալ. Տ. Խաչատուր քինյ. Զարգարեան, Նորիկ Յարութիւնեան, Սքաւլեթ Սահակեան
- 200,000-ական ուխալ. Վարդուշ Զարգարեան, Անիթա Ալեքսանդրեան՝ Հիլդա Մարգարեանի յիշատակին, Սաթօ Աւետումեան՝ Յովսէփի եւ Աշխարուհիի յիշատակին, Հրաչ Մուրադեան, Յարութ Կիրակոսեան, Վրէժ Ծիրանեան, Քեօին Մինաս-Խաչիկեան՝ Բաֆֆի եւ Ժենիկ Տէր Մարտիրոսեանների յիշատակին, Ալվարդ Զարգարեան, Գուրգէնեան ընտանիք
- 150,000-ական ուխալ. Քեօին Մինաս-Խաչիկեան՝ Խաչիկ եւ Մարիամ Յովսէփեանների յիշատակին
- 110,000 ուխալ. Գարեգին Մարկոսեան
- 100,000-ական ուխալ. Վարուժ Ղարախանեան, Հայրապետեան ընտանիք

Ծանր հիւանդներին օժանդակութեան ֆոնդ

- 5,000,000 ուխալ. Միքայէլ Զոհրաբեան՝ Սոնիկ Զոհրաբեանի յիշատակին
- 3,000,000 ուխալ. Էմիլ Զոհրաբեան
- 1,000,000 ուխալ. Ն.Զ. Հայոց ազգ. «Քանանեան» աղջ. դպրոց՝ Հանգուցեալ Ժերմէն Լազար Բաղալեանի յիշատակին

Ն.Զ. Հայոց ազգ. «Քանանեան» դպրոց

- 5,000,000-ական ուխալ. Արամազդ Խաչեան, Կարօ Յովսէփեան
- 1,500,000-ական ուխալ. Մագի Հակունեան, Բօյաչեան, Տիգրան եւ Հրաչ Բօյաչեաններ՝ Մարօ Քոչարեան-Աղանեանցի յիշատակին
- 1,000,000-ական ուխալ. Զարեմ եւ Յամիկ Քոչարեաններ՝ Մարօ Քոչարեան-Աղանեանցի յիշատակին, Նարբէլ եւ Անահիտ Քոչարեաններ՝ Մարօ Քոչարեան-Աղանեանցի յիշատակին
- 250,000 ուխալ. Լիլիան Ալեքսանդրեան
- 200,000 ուխալ. Անիա Յովհաննիսեան
- 100,000 ուխալ. Անահիտ Քոչարեան
- 50,000 ուխալ Մարալ Վարդումեան

Աւարտական հանդիսութեան առթիւ

- 2,000,000 ուխալ. Օդէլիա Տ. Սուքիասեան
- 1,500,000-ական ուխալ. Ադրիան Դաւթեան, Արգամ Թորոսեան, Արթի Հայրապետեան
- 1,000,000-ական ուխալ. Ալէքս Արդալեան, Անիա Կիրակոսեան, Միրօ Ղազարեան, Արթուր Նովչադեան, Մենուա Յովսէփեան
- 600,000 ուխալ. Հրաչիկ եւ Վեգինէ Միրզախանեաններ
- 500,000-ական ուխալ. Արթուր Աղախանեան, Անիա Անդրիասեան, Լիդա Զարգարեան, Անդրիա Խաչատրեան, Մեղմիկ Ղազարեան, Նինէլ Մարկոսեան, Անի Յարութիւնեան, Արիւն Յովհաննիսեան
- 400,000 ուխալ. Վանայ Ծիրանեան
- 300,000-ական ուխալ. Մարգարիտ Դաւթեան, Գայիանէ Խողալվերդեան, Արուսիկ Ղեւոնդեան, Սիւնէ Յարութիւնեան, Ժուլիետ Ա. Աղայեան
- 250,000 ուխալ. Սիւնէ Ուղուրեան
- 200,000-ական ուխալ. Ն.Զ. Հայոց ազգ. «Արմէն» կրթահամալիր, Նայիրի Յովսէփեան, Սօսէ Պողոսեան, Ժանետ Սիմոնեան
- 100,000 ուխալ. Արիւնէ Յաղուսեան

Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին նվիրած «Հայրենագիտական» մրցոյթի առթիւ

- 1,000,000 ուխալ. Արամազդ Խաչեան
- 500,000 ուխալ. Լալա Դիլանջեան
- 300,000-ական ուխալ. Անիաս Զոհրաբեան, Անիա Թորոսեան, Թէա Թահմազեան
- 200,000-ական ուխալ. Լուսիա Գալստեան, Լուսիա Մատթէոսեան, Մանէ Յովսէփեան, Նելիանա Գրիգորեան, Նայիրի Օհանեան, Անիա Մարգարեան, Միլենի Ղազարեան, Ռենիա Մինասեան, Անիա Մինասեան, Լիլիան Ալեքսանդրեան
- 150,000-ական ուխալ. Լուսին Յովսէփեան, ոմն
- 100,000-ական ուխալ. Արեգ Յարութիւնեան, Լիլիան Միրզախանեան, Վանէ Օրօջեան

Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին նվիրած «Ճարտասանութեան» մրցոյթի առթիւ

- 600,000 ուխալ. Արիւնէ Խաղուլեան
- 500,000-ական ուխալ. Լալա Դիլանջեան, Ծաղիկ Մատթէոսեան
- 300,000-ական ուխալ. Անիա Թորոսեան, Թէա Թահմազեան
- 150,000-ական ուխալ. Արփա Մարգարեան, Ժուլիետ Սէթ Աղայեան, Հրաչիկ Միրզախանեան
- 100,000-ական ուխալ. Լիլիթ Հայրապետեան, Անիա Մարգարեան

Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին նվիրած ծնողների «Հայրենագիտական» մրցույթի առթիվ

- 300,000-ական դրամ. Անիա Թորոսեան, Թէա Թամմազեան
- 100,000-ական դրամ. Լիլիթ Հայրապետեան, Արփա Մարգարեան, Անիա Մարգարեան

Հայ դասի յանձնախումբ

- 2,000 Ա.Մ.Ն. դոլար. ոմն

Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութիւն

- Իրանահայ 27-րդ Գարնանային Խաղեր
 - 1,000,000-ական դրամ. Ն.Զ. Հայ Կանանց Գիտութեան միութիւն, Նարբէլ Քոչարեան, Ծաղկուշ եւ Հայկազ Դաւթեաններ
 - 500,000-ական դրամ. Ն.Զ. Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւն, Ա.Ա. Վանքի «Կոմիտաս» երգչախմբի վարչութիւն, «Քանանեան» դպրոց, Էդարոյ Ղազարեան, Նորիկ Պողոսեան, Կարէն Ղարախանեան, Զարեմ Յովսէփեան, Միգանուշ Տէր Մարտիրոսեան, Սերժիկ Ասատրեան, Համիկ Ալեքսանդրեան
 - 300,000-ական դրամ. Ն.Զ. Հայ Ազգ. «Արմէն» համալիր, Դուրան Տ. Յովհաննիսեան, Անգիլնէ Ղազարեան, Սելիլնէ Խուրաբախչեան, Յասմիկ Դիլանչեան, Անի Սիմոնեան, Արմոնդ Ալեքսանդրեան, Վանէ Իսաղուլեան, Անգիլնէ Խաչատրեան
 - 250,000-ական դրամ. Ադրիլնէ Խաչատրեան,
 - 200,000-ական դրամ. «Կատարիներ» դպրոց, Անգիլնէ Վարդանեան, Ռազմիկ Ալեքսանդրեան
 - 100,000-ական դրամ. Սարա Ներսիսեան, Ռուբէն Զանի, Մեղմիկ Մանուկեան, Մելանիա Դաւթեան

Ն.Զ. Հայուհեաց բարեգործական ընկերութիւն

- 1,400,000 դրամ. ոմն
- 1,000,000 դրամ. ոմն
- 500,000 դրամ. Մանուշ Յարութիւնեան
- 300,000 դրամ. Արութիւն Օհանեան
- 150,000-ական դրամ. Վարդուշ Սարուխանեան, Արսիլնէ Յովսէփեան
- 100,000-ական դրամ. Վանէ Թորոսեան, Սեդա Բաբումեան,

Համասփիւռ Մարգարեան՝ մօր եւ սկեարոջ յիշատակին Քառասուն մանկանց տօնի առթիւ

- 200,000 դրամ. Նագիկ Յակոբեան.
- 100,000 դրամ. Սեակ եւ Արմիլնէ Խաչատրեաններ

Մայրերի օրւայ առթիւ

- 500,000-ական դրամ. Օդէթ Ծատուրեան-Բաղդասարեան, Վարուժ եւ Սթելա Վարդանեաններ
- 300,000-ական դրամ. Մագի Հակունեան, Ասանէթ Յակոբեան, Երանուհի Բաղդասարեան, Վազրիկ եւ Քառույն Վարդանեաններ՝ Անուշ Վարդանեանի յիշատակին
- 200,000 դրամ. Սոնիկ Կիրակոսեան
- 100,000 դրամ. Լալա Բաղդասարեան

Զատիկւայ տօնի առթիւ

- 300,000 դրամ. Անդրանիկ Ղարիբեան
- 250,000 դրամ. Սարհադ Թումանեան
- 200,000-ական դրամ. Սոնիկ Կիրակոսեան, Շնորա Եսայեան՝ Զոհիկ եւ Արաքս Իսրայէլեանների յիշատակին

Ս. Հռիփսիմէի տօնի առթիւ

- 200,000 դրամ. Վազրիկ եւ Քառույն Վարդանեաններ
- 150,000 դրամ. Լալա Բաղդասարեան
- 100,000-ական դրամ. Քրիստ Ստեփանեան, Մարգարիտ Յարութիւնեան, Մագի Յարութիւնեան, Հռիփսիմէ Թորոսեան

Ծահիղահրի Հայ Համայնի Վարչութիւն

Սրբոց Վարդանանց տօնի առթիւով

- 1 ոչխար. Բաֆֆի Նագարեան

Ս. Զատիկ տօնի առթիւով

- 50,000-ական դրամ.- Սեդա Բաբումեան
- 50,000-ական դրամ.- Լինա Մովսեսեան

Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի առթիւ

- 2,000,000-ական դրամ.- Փերիոյ կրթասիրաց միութեան Շահինջահրի մասնաճիւղ
- 500,000-ական դրամ.- Շահինջահրի Հայ կանանց եկեղեցասիրաց միութիւն, Շահինջահրի «Նարեկ» երգչախումբ, Շահինջահրի «Նարոտ» երգչախումբ

Առաջնորդարանին եւ ազգային կառույցին առնչուող յոյսերն ու թղթակցութիւնները պատրաստում է Ազգային Առաջնորդարանի Հանրային Կապի գրասենեակը, համայնքային եւ կրօնական արարողութիւններին վերաբերող յոյսերը՝ «Այլք»-ի թղթակիցները, «Արարատ» Միութեան առնչուող յոյսերը՝ օրդ. Երանուշ Թահմազեանը, իսկ Շահինջահրի հայ համայնքին վերաբերող տեղեկութիւնները՝ տկն. Վիտիթ Յարութիւնեանը:

Որոշ ծրագրերի յոյսանկարները տրամադրուում է պրն. Գեւորգի Խաչատրեանը:

ՄԵՐ ՀԱՍՅԵՆ
 خلیفه گری ارامنه جلفای اصفهان
 و جنوب ایران
 صندوق پستی ۸۱۷۳۵/۱۱۵
 Armenian Cathedral - P.O.Box 81735-115
 New - Julfa, Isfahan, Iran
WWW.Norjughia.ir
WWW.Vank.ir
 E-mail: Sourbv@Yahoo.com
 Tel: +98 31 36243471-2
 Fax: +98 31 36270999



1915 ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ
100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑ

**ՍՐԲԱԳԱՍՈՒՄ՝
ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ
ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ**

